


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ մէջ 8 ՄԶԸ.
Գաւառացի 10 ՄԶԸ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ մէջ 5 ՄԶԸ.
Գաւառացի 5 ՄԶԸ.
Յանուարու տարւոյ մէջ անդամի հա-
մար 3 դարձուց երկու անգամի հա-
մար 2 դարձուց աւելի անգամներու
համար . զատ սահմանափակ իւր կըլ-
լայ :



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լորտ Սալիզադընի Անգղիոյ ար-
տաքին գործոց նախարար անուանին
հաստատեցաւ, սակայն տակաւին Անգ-
ղիոյ աշխարհափարութեան ինչ ըլ-
լայ չհասկցուցեցաւ, և կարծենք թէ
մինչև որ գործողութեան չսկսի, հաս-
կըցուի անկարելի է : Ինչ նպատակ
ունին արդեօք Անգղիոյ պատերազ-
մական պատրաստութիւններն, որո՞ւ
դէմ պիտի մարտնչի Անգղիոյ : Եթէ
Ռուսիոյ յաջողութիւնները ձեռքէն
պիտի խլէ, ո՞ր էր մինչև հիմայ և
ինչ պատճառաւ թողուց որ ջարհին
լեզենները մինչև Բիւզանդիոնի դու-
ռը քայլեն : Դեռ Բիւզանդիոն կանգուն
կեցած ժամանակ, դեռ Ասիոյ բեր-
դերը չինկած : Անգղիոյ կրնար Ռու-
սաց արշաւանքն արդիւնեւ երեւի և
չըրաւ : Այսօր հաշտութիւնը կըն-
քուած է, Անգլիոն ամեն բան վեր 'ի
վայր շրջել կուգէ, և իւր նպատակն
ինչ է՝ չգիտցուի : Եթէ Պորթալիոյ
հեռագիրն ստացէ, և Լորտ Սալիզ-
ադընի Անգղիական դեսպանաց շրջա-
բերական մը զրկեր է, որով Ռուսո-
Օսմանեան նախապայմաններուն խառ-
նաշիւթը որոմադրութիւնները կը
ընենագատէ, և կը բողբէ եղբի ա-
նոնց դէմ՝ իբրև հակառակ Անգղիոյ
չափուց և խաղաղութեան : Այս ըս-
կըքանց յենով, Անգղիոյ տեքու-
թեանց խորհրդոյ գերին նկատմամբ
իւր կարծիքը կը արդէ, այսինքն միշտ
կը պահանջէ որ դաշնագիրն ամբողջ
ներկայանայ և վիճարկութեան են-
թարկի : Կ. Պոլսոյ դեսպանախորհրդ-
դին մէջ ինկնութիւնք գործադրին հա-
մակարծիք դառնող Լորտ Սալիզադ-
ըն՝ այսօր իւր գործին հետեւանաց
դէմ կը բողբէ : Իւր հաւանութիւնն
ստացած խնդրոց նկատմամբ Ռու-
սիոյ պատերազմը բացառել և յաղթելը :
Բայց Լորտ Սալիզադընի Կ. Պոլսոյ դես-
պանախորհրդին առաջարկութեանց
դժած սահմաններէն աւելի ընդար-
ձակ կերպիւ Ս. Երեւան խնդիրը լու-
ծող դաշնագրութիւնը չընդունիր ե-
ղբի, և կերեւի որ կարծեաց մեծ փո-
փոխութիւն մ'եղած է իւր վրայ :
Բայց հաճախ ինկնութիւնք և Սալիզադընի
միանգամ ևս դէմ առ դէմ կերեւն,
քանզի թէ և առաջինը Լոնտոն չպի-
տի երթար կըսուէր, վերջին լուրե-
րու նայելով՝ պիտի երթար. բայց
արդեօք Լոնտոնի նախորդ դաշնա-
գրին (Բրիտանիոյ) ժամանակ բարե-
կամութեամբ իրարմէ բաժնուող այս
երկու պետական մարդիկ հիմա իրա-
րու հետ բանակուի՞ն պիտի ընեն : Ե-
թէ չենք սխալիր, այն ժամանակ Լորտ
Սալիզադընի մասնաւոր կոչուեք մ'ալ
տուաւ ինկնութիւնք գործադրին, որ Կ.

Պոլսոյ դեսպանախորհրդին մէջ իւր
ընկերակիցն էր :
Անգղիոյ աշխարհափարութեան վը-
րայ քիչ մը ըստ կրնայ սփռել Տէյլի
Թէյէկըաֆի մէջ հրատարակեալ նա-
մակ մը, որոյ տիտղոսն է «Պարտիք
դրաւել զեղիպոսոս» : Նամակին հե-
ղինակը Սուէիչի ջրանցքին և Եգիպ-
տոսի կարեւորութիւնը կը հաստատէ
Հնդկաստանի հետ հաղորդակցու-
թեան համար : Սուէիչի ջրանցքէն
անցնող նաւերուն հարիւրն եօթա-
նասուն և չորսն Անգղիական են :
Անգղիայէն Պոլսոյ հեռաւորութիւ-
նը Բարեյուսոյ հրաւանքանէն 40,860
նաւային մղոն է, իսկ Սուէիչի ջրանց-
քին վրայէն 6,020 մղոն միայն : Այս
վերջին ճանապարհն հինգ հազար
մղոն կը չափէ, որ 22 օր ըսել է : Խա-
ղաղութեան ժամանակ այս խնայու-
թիւնն ստակի խնդիր մ'է միայն, սա-
ղաղութեան մէջ ներքին խռովութեան
մը ժամանակ՝ անգլին է : Հեղինակին
Եգիպտոսի դրաւելման պահպանու-
մը կարելի կը համարէ՝ քանի որ Անգ-
ղիոյ Միջերկրականի մէջ ծովային զո-
րութիւն ունենայ թշնամի դաշնակ-
ցութեան մը դիմադրելու կարող : Սա-
կայն բան մը միայն զինք կարգելու
Եգիպտոսի դրաւելմը խորհրդուրդ տա-
լէ, այն է Գաղղիոյ դիմադրութիւնը
բայց և այնպէս կը տաղանայ երբ
կը յիշէ որ Սուէիչի ջրանցքին սեփա-
կանութիւնն եօթնասուն և հինգ
տարիէն խտիվին պիտի մնայ, որ կա-
րելի է մինչև՝ այն ատեն երկրորդան
կարգաւորութեամբ կամ ուրիշ պատճա-
ռաւ մը ջրանցքը դադանի վաճառէ
Գաղղիոյ : Վերջապէս թէ՛ Գաղղիոյ
բարեկամութիւնն և թէ՛ Եգիպտոսի
խաղաղութիւնը պահպանելու համար՝
Տէյլի Թէյէկըաֆի նամակագիրը չհա-
մարձակիր Եգիպտոսի դրաւելմը յայտ-
նապէս պաշտպանել, այլ պէտք է
կըսէ, Անգղիոյ գոհ լինի իւր ծովա-
յին զորութիւնն ապահովելով և իւր
տիպէ յորդորելով որ իւր երկիրը լու-
կաւարարէ և իւր օտար պարտա-
տեալը նկատմամբ հաւատարմութիւն
պահէ : Անգղիոյ պէտք չէ թողու որ
ուրիշ տեքութիւն մ'Եգիպտոս մտնէ
պէտք չէ որ դաշնակցի մը հետ հոն
զօրք զրկէ, ուրկէ ապագայ կազեր
ու կուիններ կը ծագին պէտք չէ որ
Սուէիչի ջրանցքը չեղըք լինի, այսինքն
օտար տեքութեանց պատերազմական
նաւերը կարենան անկէ անցուգործ
ընել : Վերջապէս նամակագիրը մեծ
տիտղոսով մը կ'սկսի, և համեմատ ա-
ռաջարկներով գոհ կըլլայ : Եթէ Անգ-
ղիոյ աշխարհափարութիւնն այս է,
մեծ բան մը չէ : Սուէիչի ջրանցքին
սպառնալից չկայ, և կրնայ Անգլիոն
իւր կասկածները փարատել
Եթէ Անգղիոյ տակաւին շատ գործ-
ցոյց չտուաւ, ընդ հակառակն շատ

խօսք խօսեցաւ, շատ գիր գրեց : Պ.
Կլաւտոն մարտի 23 ին կրինիի ա-
ղատամիտներուն մէջ պատուիրակու-
թիւնն ընդունեց, որք կը փախաբէին
որ անուանի ատենաբանն յիշեալ քա-
ղաքին երեւոյթանութեան ապագայ
ընտրելութեան հարժարի, և ար-
դէն տուած հրաժարականն ետ առ-
նու : Պ. Կլաւտոն Ս. Երեւան խնդ-
րոյն վրայ խօսելով ըսաւ թէ ինք 6
միլիոն Անգղիական ոսկի պատերազ-
մական նոր ծախք խնդրուելուն դէմ
քուէ տուած էր, վասն զի ընդունայն
վաճառմ մ'էր այս՝ խաղաղական բա-
նակցութեանց հետ պատերազմական
պատրաստութիւններ չփոխելով : Գը-
րիստոնեայ ժողովրդոց, ըսաւ, եր-
բէք օրինակ տրուած չէր որ խաղա-
ղութեան նպատակաւ տեքութեանց
խորհուրդ մը կազմուէր առթիւ՝ ա-
մեն գործարան ազգամիջերը պատ-
թիւն պատերազմին արդիւնքը « փա-
ռաւոր » անուանեց, և ըսաւ թէ
քանի որ թուրքիա կը դիմադրէր,
անոր օգնութիւն տրուելը կրնար հաս-
կընալ : Բայց այժմ ինքն ևս չկրնար
ըսել թէ ինչու համար պատերազմ
պիտի ըլլայ : Պ. Կլաւտոն Յունաս-
տանի նկատմամբ Լորտ Տէյլի ըրած
առաջարկութիւնը գովեց, որով Ա.
Թէյէկըաֆի կառավարութիւնը տեքու-
թեանց խորհրդին մէջ պիտի ընդուն-
ուի իւր ձայնը լսելի ընելու համար :
Իսկ Ա. թէյէկըաֆի գաշնագրութեան
քանի մը կէտերը մերժեց, որք են
Պուլղարիոյ սահմաններուն ընդար-
ձակ տարածութիւնն և Ռուսիոյ
յիշերէն Պետրապոլիոյ պահանջումը :
Անգլահարապէս խօսելով, Ա. թէյ-
էկըաֆի գաշնագրութիւնն Եւրոպիոյ
մէջ լաւ ապագայութիւն չըրաւ : Ոչ
միայն Անգղիական՝ այլ և Գաղղիա-
կան թեքութեան զայն կը ընենագատեն,
և անոր յօդուածներն Եւրոպիոյ կող-
մէն բարեփոխութեան և վաւերաց-
ման կարօտ կը համարին : Միայն
հիւսիսային Գերմանիոյ կողմէն, որ
Պիսմարք իշխանին բերանը կը հա-
մարուի, կը յայտարարէ թէ Ա. թէյ-
էկըաֆի գաշնագրութիւնը Գերմա-
նիոյ շահուց չգալիր, որք կեդրոնա-
կան Եւրոպիոյ վաճառականութեան
ճանապարհն եղող Գանուբի չեղորո-
թիւնը կը պահանջեն և գաշնագրու-
թիւնը կը տրամադրէ որ Գանուբի
բերդերը քաղուին : Բայց կազմելը
մնուցաւ որ եթէ Ռուսիոյ Պետրա-
պոլիոյ տառնու, Գանուբի բերաններն
անոր ձեռք կ'ընան : Ենչ կազմելը
կը յարէ նաև թէ Գաղղիական և Նե-
ղոսիներն ազատ են : Բայց Անգղիա-
ցիք այս խնդրին ուրիշ կերպիւ կը
նկատեն, և այժմէն Ռուսիոյ և Թուր-
քիոյ մէջ գաշնակցութիւն մը նախա-
տեսելով՝ կերեւակային թէ Ս. Երեւան
թշնամի նաւատորմ մը կրնայ երեւի

Միջերկրականի մէջ իրենց ծովային
զօրութիւնը խաղաղակեալ, որով Հինգ-
կաստան ձեռքէ կերթայ, և Անգղիա
փոքր կողի մը միայն կը մնայ :
Եպիւրոսի մէջ Հեղինակն ապրա-
տամբութիւնը մեծ հարուած մը կը-
րած է : Բատթիքի հրամանաց ներ-
քեւ դառնող Բէլիոնի ապստամբ
Ասաֆ փաշային և Հօպարթ փաշային
կողմէ ծովէն ու ցամաքէն դարձու-
լով պաշարեցան : Թալիքի թղթակից
Պ. Սիր, որ ապստամբաց բանակին մէջ
էր, առմէք մը դարձուցով մեռաւ,
գուցէ Հօպարթ փաշային առմէքէն,
քանզի յարձակման սաստիկագոյնն ա-
նոր կողմէն եղեր է :
Վերջին թղթագրով եկած Եւրո-
պական լրագրաց մէջ հետեւեալ լու-
րերը կը տեսնենք :
Գերմանիոյ սպիտակ մը Լոնտոնի մէջ
կարծեաց փոփոխութիւն մը յառաջ
բերաւ : Պատերազմը նա ազ անհրա-
ժեշտ կը համարուի : Խաղաղական
եղրակացութեան մը հասնելու յոյս
կայ :
Ինկնութիւնք խօսքերուն նայելով,
Աւստրիոյ պահանջումները մեծ են :
Ա. թէյէկըաֆի գաշնագրութեան ա-
մեն մասերուն բարեփոխմանը կը նը-
կըրտին : Կողմէն որ Պուլղարիոյ, Սեր-
վիոյ և Գարապաղի նոր սահմանները
փոխախն, և կը կարծէ թէ Ռուսիոյ
ամեն կէտերուն վրայ զիջում պիտի
ընէ :
Լոնտոն 29 մարտ .
Լրագրաց կարծիքն է թէ Լորտ
Տէյլի հրաժարումն և պահանջի
գործը 'ի վէն կուտին ապացոյց են
թէ Անգղիոյ պատերազմի պատրաս-
տուելու և Գաղղիական դրաւելու
որոշում ըրած է, որպէս զի Ռուսաց
թղթ չտայ կէտերուն դրաւել :
Մօրնինկ-Բօսնի լրագիրը կը յուսայ
թէ Անգղիոյ կողմէն աշխարհափա-
րութիւնն Աւստրիոյ գործողութեան
եղանակը պիտի փոխէ :
Լոնտոն 29 մարտ .
Վիեննայէն հետեւեալը կը հեռագ-
րեն Տէյլի Թէյէկըաֆի լրագրին .
« Ռուսիոյ դրաւած երկիրներուն
զուգահեռական կերպիւ Աւստրիոյ
ալ երկիրներ դրաւել տալու ծրա-
դիրը բաւական հաստեցած ըլլալով,
կարգադրութիւն մը կրնայ ըլլալ Ռու-
սիոյ և Աւստրիոյ մէջ : Աւստրիոյ ներ-
կայացեալ սկիզբն Ա. Պուլղարիոյ մէջ
Սլաւոնական ձեռք բերած առաւե-
լութիւնն հակադրուելու համար՝ Ա-
ւստրիոյ իշխանութիւնը Պալքանաց
արեւմտեան կողմի երկիրներուն վրայ
ընդարձակել : Այս ծրագիրն հաճո-
յական ընդունելութիւն կը գտնէ Ա-
ւստրիոյ բարձր շրջանակներուն մէջ :
Աւստրիոյ իրաւաբաններէն մինչև Եգէ-

տեղան ծով բաց ճանապ մը պահելու պատրուակաւ կուգէ որ Պոսնիայէն ու Հէրսէ-քէն զատ Մակեդոնիոյ մէկ մասն ալ ձեռք անցունէ Սերանիոյ վանդակը Երմ ։

Լոնտրա 29 մարտ .
Վիեննայէն հետեւեալը կը հետադ-
րեն Տէյլի Նիւզի .

« Ինկաթիէֆ զօրավարին լրագոր
իշխանութիւն տրուեցաւ Պուլըրիոյ
արեւմտեան սահմաններուն նկատ-
մամբ ընդարձակ զինուորներ ընելու ։

Լոնտրա 29 մարտ .
Իսպախալութիւնը մեծ զօրու-
թիւններ Արեւելք զրկելու միջոցներ
ձեռք առաւ ։ Գործակալներ զրկուե-
ցան Գաղղիա , Գերմանիա և Ամերի-
կա՝ նաեւ փորձելու և ձի և ուրիշ
հանդերձանք զնելու ։

Զօրաբանակ մը պիտի զրկուի Մի-
տիլինէ կղզին ։

Լոնտրա 29 մարտ .
Փոխադրական նոր շող ենաւոր
վարձուեցան պատերազմի նախարա-
րութեան կողմէ ։ 30000 զօրաց բա-
նակ մ'աւարտ պատրաստ է՝ եթէ
պէտք ըլլայ՝ Եւրոպական թուրքիոյ
ծովեզերաց տակաւին անձանթ մէկ
կէտը դրաւելու ։

Միտիլինէ կղզւոյն դրաւելու ան-
պատճառ տեղի պիտի ունենայ ։

Լոնտրա 28 մարտ .
Պէրլինէն հետեւեալը կը հետադ-
րեն թալիզի .

« Մեծ տէրութիւններէն ոմանք
չընդունցին Ռուսիոյ այն առաջարկին ,
որ առանց Անգլիոյ մասնակցութեան
տէրութեանց խորհուրդը դուրսբեր
կուգէր ։ »

Լոնտրա 28 մարտ .
Վիեննայէն կը հետադրեն Տէյլի
թէէլիւաթ լրագրին թէ խօսքանտի
իւր թանկ մը կը պատրաստեն՝ Անգ-
լիական Հնդկաստանի վրայ քարելու
համար ։

Կատպից ծովուն մէջ սպասող Ռու-
սական նաւերուն հրաման եղաւ որ
զօրք վտարուի զպատրաստութիւն ։

Բեդրասպուրի 27 մարտ .
Բեդրասպուրի ժողովուրդ լրագրի
կը յայտարարէ թէ Ռուսիա չկրնար
իւր զինուորական պատրաստութիւն-
ներն անսահմանաբար պահել , ուս-
տի և արագ լուծու մ'մը հարկաւոր է ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 1 ապրիլ .
Երէկ Ինկաթիէֆ զօրավարը Բեդրաս-
պուրի գնաց քանի մը առաջարկութիւն-
ներ տանելով , որք քանի մը զինուորներ
Ռուսիոյ ընդունել տալով՝ Եւրոպիոյ լու-
րը կառավարութիւններն իրաւասուն ը-
նելու կը նկատին ։

Լոնտրա 2 ապրիլ .
Կատպից ծովուն Անգլիոյ դիտուած
ները բացատրող չըջաբերական մը զրկեց
տէրութեանց ։

Սոյն չըջաբերականը կը հաստատէ թէ
Անգլիոյ կառավարութիւնը չընդունիր
Ռուսոս-թուրք դաշնադրութեան մասնա-
կան քննութիւնն , որովհետեւ անոր մէջ
մի կէտերը կը խտորեն 1856ի դաշնադ-
րութենէն ։ Յետոյ կը հաստատէ թէ Այ-
սթէֆանոսի դաշնադրութիւնը Սլաւեան
մեծ տէրութիւն մը կը հիմնէ Ռուսիոյ
հսկողութեան ներքեւ ։ Շրջաբերականը
կաւելցնէ թէ դաշնադրութեան քննու-
թիւնը՝ ահրաժեշտ մը կողմէ ընտրուած
ինչ ինչ յօդուածոց վրայ սահմանաւորին
երեւակայական դեղ մը կը լլայ այն վը-
տանգներուն՝ որք Անգլիոյ շահուց և Եւ-
րոպիոյ խաղաղութեան կ'սպառնան ։

Անգլիական լրագրիւր Լորտ Սալիսբու-
րի այս չըջաբերականը խիստ ծանրա-
կելու կը համարին , վասն զի ճշմարիտ առ-
բանաւորութիւն մ'է Այսթէֆանոսի դաշ-
նադրութեան գէտ , և կը ցուցնէ թէ
Անգլիա իւր առաջնութեանց գործնա-
կան արդիւնք տալ կուգէ ։

Վիեննա 2 ապրիլ .
Այս թուի թէ մեծ տէրութեանց մէջ
համաձայնութիւն կայ Ռուսիոյ պահան-
ջաւորը մերժելու ։

Կը հաւատեն թէ Կորչաքոֆ իշխան
Ինկաթիէֆ զօրավարին Վիեննայի մէջ կա-
տարած պաշտոնին արդիւնքէն զլաւագու-
նով Փարիզի (Այսթէֆանոսի) դաշնադ-
րութիւնը բարեկրթելու առաջարկութիւն
պիտի ընէ տէրութեանց խորհուրդին ։

Վիեննա 3 ապրիլ .
Լոնտրայի Կատարական դեպտան Պ .
Պայսթի յանդիմանի Վիեննա երթալը
սուտ կը համարուի ։

Լոնտրա 3 ապրիլ .
Թայիլ կը յուսայ որ եթէ Աւստրիա
և Անգլիա համաձայնութեամբ , հաստա-
տամտութեամբ և անկեղծութեամբ գոր-
ծեն , խաղաղութիւնը չ'աւարուի ։

Կը հաւատեն թէ Մանչի Անգլիա-
կան նաւախուրդը Պրիւսիոյ պիտի երթայ
Էսթրապուրի դուքսը Լոնտրա կողմե-
ցաւ ։

Վիեննա 3 ապրիլ .
Աւստրիա և Անգլիա Այսթէֆանոսի
դաշնադրութիւնը խորապէս բարեկրթու-
լու հարկին վրայ համաձայն են ։

Պէրլին 4 ապրիլ .
Գերմանական դրաւելու նաւախուրդ
մը մայիս 6 ին Արեւելք պիտի երթայ ։

Կայսեր խօթութիւնն (պաղ առած է)
իւր ընթացքը կը շարունակէ դոհացուցիչ
պայմաններով , բայց բժիշկները չեն թո-
ղուր որ սենեակէն դուրս ելնէ ։

Պուրէշ 4 ապրիլ .
Երկու ժողովոց կողմէ կազմեալ յանձ-
նախուրդ մ' Այսթէֆանոսի դաշնադրու-
թեան դէմ բողոք մը կը խմբագրէ որ տէ-
րութեանց պիտի արուի ։

Բեդրասպուրի 4 ապրիլ .
Ինկաթիէֆ զօրավարն եկաւ . իւր 'ի
Վիեննա կատարած պաշտօնին արդեանց
վրայ բան մը չ'իմացուեցաւ ։

Կորչաքոֆ իշխանը Լորտ Սալիսբուրի
չըջաբերականին Այսթէֆանոսի նախապա-
մաններուն իւր բացատրական քննադա-
տութիւն մը նկատելով պիտի խնդրէ
Անգլիայէն որ անոր տեղ զնեւ ուղած
գերական լուծումն ինչ որ է՝ զայն ծանու-
ցանէ ։ Գծադրութեան առաջին տունելու
կախատի ։

Լոնտրա 5 ապրիլ	
Օսմ. Քօնս .	7 15/16
Փրիս .	1865 3/8
»	1869 7 11/16
»	1871 34
»	1872 13
» Եղիպտ .	54 3/4
Անգլ. Քօնս	94 7/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա . Սուլթանն հինգշաբթի ի-
րիկուն կողմէ մը տուաւ երկուրդի
պալատին մէջ 'ի պատիւ մայրաքա-
ղաքի Գերմանական դեպտան Տը
Ռայս իշխանին ։

Նոյն իրիկունը վսեմ Սաֆվէթ
փաշան ալ կողմէ մը տուաւ 'ի պա-
տիւ Գաղղիոյ դեպտանին ։

Երէկ Նիքոլա մեծ դուքսն եր-
կաթուղիով Կ. Պոլիս եկաւ , և Քե-
րայի դեպտանատունն իջաւ ։

Իսկիւտար Սէլիմիէի զօրանոցը
ընակեալ 650 ի չափ Ռուս գերիներէն
այսօր Այսթէֆանոս տարուելով Ռու-
սաց զինուորական իշխանութեան
պիտի յանձնուին ։

Գրանի մ'Օսմանեան սպանիւր Բ .
Դրան թարգմանատան անգամ Սղար-
եան էֆէնիայի հետ Ռուսմանիա պի-
տի երթան՝ հոն գտնուող 6000 ի չափ
Օսմանեան զերի զօրականները Կ. Պո-
լիս բերելու համար ։

Մայրաքաղաքի Բուխաց Պատրի-
արքը՝ Բ. Դուքսն հրաման ստանալով
կիրակի օրը չորս մետրապոլիտ զըր-
կեց Ռուսիոյ դեպտանատունը Նիքո-
լա մեծ դքսին դարձուար բարեկրու ։

Նոյն օրը Պուլըրաց Լիւդարքն ալ
քանի մը Պուլըր բերեկիայ հետ
Մեծ դքսին ներկայացաւ ։

Տիւրիսի Մեղրա Հայաստանի լրագ-
րին մէջ կը կարդանք թէ հանդուգ-
եալ Բ. Մ. Շէլլքովիչի հայադի
զօրավարին մարմինը փետրվար 24ին
Տիւրիս տարուելով Զիւրաշէնի եկեղե-
ցին դրուել , և հետեւեալ օրը մեծ

հանդիսիւ վանուց մայր եկեղեցին
տարուելով՝ հոն պատրաստուած շի-
րմն ամփոփուել է ։

Սոյն յաղարկուորութեան ներ-
կայ գտնուելու են Կովկասեան փո-
խարքայ Միքայէլ մեծ դուքսն և
բոլոր քաղաքային և զինուորական
պաշտօնատարք և աստիճանաւորք
և զրեթէ Տիւրիսի բոլոր ժողովուր-
դը ։

Հանգուցեալ զօրավարը , կըսէ
յիշեալ լրագրին , ոչ միայն իբրեւ քաջ
և հանձարեղ զինուորական , այլ և
իր քաղաքային իմաստուն կառա-
վարիչ՝ թէ՛ կառավարութեան և թէ՛
ժողովրդաց սէրն ու համարումը գրա-
ւած էր ։

Գաղղիական Մօնիթէօր լրագրին
իւր մարտ 26 թուով Եւրոպիոյ մէջ
հետեւեալ դէպքը կը ծանուցանէ ։

« Երէկ Բօն Ռուսիայի մօտի բաղ-
նիքին սպասուորներէն մին՝ Սէն գե-
տին մէջէն մանկամարդ օրիորդ մը
հանեց , որ քանի մը վայրկեան գե-
տին եղբւրքը պաշտելէ ետեւ ինք-
զինք ջուրը նետեր էր ։

« Օրիորդն , որ հաղիւ 16 տարու
կար , և վայելուց կերպիւ հապուած
էր , օգնութեան պահանջող տար-
ուեցաւ , և հոն հարցաքննուելով՝ ի-
մացուեցաւ որ Եւրոպական մեծ տէ-
րութեանց միջին դեպտանին աղջկին
էր ։

« Անմիջապէս իւր ծնողաց ապա-
րանքը տարուեցաւ , և օրիորդին
մամը հինգ հարիւր ֆրանքի գու-
մար մը պարգեւեց բաղնիքին սպա-
սուորին՝ իբրեւ փոքր թերհաշիւ իւր
շնորհակալութեան պարտուց ։

« Օրիորդը գեղականական պարա-
տէն մեկնած Ժամանակ թուղթ մը
նոր մէջ՝ թէ իւր կենաց վերջ տալու
որոշում ըրած էր ։ »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԷՍԶԱՄԵՆՈՒՄԻՄԻՆԷ	
24 մարտ ուրաթ իրիկուն	8.33
Բուլճարի երկաթուղի	Քր. 27 50
Թղթագրամ	Լր. 260

ԱՅԳԱՅԻՆ

Կարնոյ շրջականերէն Պատրիար-
քարան հասած բաղձնատարալիւ նա-
մակներ՝ վերջին օրերս բարեբարոս
Քրդաց կողմէ դարձուած նոր տա-
րաւութիւններն ու սպանութիւններ
կը ծանուցանեն ։

Քաղ. ժողովը՝ երէկ սոյն գրերով
զբաղեցաւ , բայց սրովհետեւ սպան-
եալ անձանց թիւն ու անունները նը-
շանակուած չէին , որոշեց սոյն ման-
րամանութիւններն ալ իմանալ և
ըստ այնմ թաղերի դրել առ Բ. Դուքսն

Լոնտրայէն մարտ 16/28 թուով
հետեւեալ կարեւոր և ուշադրութեան
արժանի տեղեկութիւնը գրուած է
մեզ ։

« Հայկական խնդիրը Լոնտոնի մէջ
այժմ՝ բուական շարժում գտաւ ։
Քաղաքագէտ անձանց և « Բլեյքս-
րու » մէջ Հայ աղբիւն և Հայաստա-
նի տպաւորի դրութեան վերայ կը
խօսին շարունակ ։ Այս յաղուածն ա-
ռաւելու զգալի եղաւ , երբ Ռու-
սիա՝ խաղաղութեան պայմաններէն
միով՝ Հայաստանի մէկ մասն իրեն
սեփականել որոշեց ։ Շատ քաղաքա-
գէտ անձինք՝ Ռուսիոյ գէպի Եփրա-
տայ հովիտն յառաջանալուն մէջ՝
Հնդկաստանի համար մեծ վտանգ
կ'ընդունան , թէպէտեւ թագուհ-
ւոյն արաւաքին դարձոց պաշտօնեայ
Լորտ Տէրպի՝ որպէս նաեւ այլք՝ այս
կարծիքէն չեն ։

Լրագրիւր Հայոց անցեալին վե-
րայ կը դրեն , և նոցա այսչափ տա-
րիներէ 'ի վեր անհնարին տառապա-
նաց և հալածանաց դէմ մաքաւելով
հայրենիքէ հեռի տարագրութեան
մէջ՝ նախանձախնդիր յամառու-
թեամբ ցարդ իրենց աղբու թիւնը ,
կրօնքն և լեզուն անտարբիր և ան-
թերի պահելին կը ջատագովեն ։
« Կուս Ուօրլտս անուն թերթն իւր
մարտի ամսաթուոյն մէջ Հայ թագա-
ւորի և վարդապետի ընտիր պատ-
կերներ հրատարակած էր , և Հայոց
պատմութեան համառօտ բովանդա-
կութիւն մի ընելով՝ նոցա արժանի-
քէն առաւել գովիտներ ըրած էր
առաւարակէն՝ նոցա ինչ ինչ յատկու-
թիւններն յիշատակելով ։

Մարտ ամսոյն սկիզբը նաեւ մի
փոքրիկ տետրակ հրատարակուեցաւ
Լոնտոնի մէջ , « Դուպանաթոգոֆը և
Հայք » տիտղոսով : Այս տետրը , որ
խաղաղասիրական ոգեւով դրուած՝
Հայոց անցեալ և ներկային մէջ կը-
րած տառապանքները կը նկարագ-
րէ , և Պուլըրաց ու Հայոց մինչեւ
այժմ ըրած յառաջադիմութեանց
և նոցա ընկերական կենաց բաղդա-
տութիւնը կընէ ետեւ , Կալէսի իշ-
խանին , թագուհուին նախարարաց ,
Լորտերուն , Բարլամէթի անդամ-
ներուն , եկեղեցականաց երեւելի
գետուն , « Բլեյքսրու » և զանազան
ընկերութիւններու ուղղուեցաւ , և
բարի ընդունելութիւն գտաւ իւր
չափաւորութեանը համար : Ուրի-
շրթի եպիսկոպոսը մասնաւոր նա-
մակաւ իւր ջերմ համակրութիւնը կը
յայտնէ Հայ աղբիւն համար : « Հա-
յերն ընտիր և աշխիւ ցեղ մի են ,
խիստ ուրախ պիտի լինիմ , կըսէ ,
զանոք անկախ և երջանիկ տեսնե-
լով օր մի ։ » Լիտրն երեւելի եկեղե-
ցականն ալ կը գրէ թէ իւր բոլոր հա-
մակրութիւնն Հայոց հետ է , և բա-
րեմաղթութիւններ կընէ անոց ա-
պառնի երջանկութեան համար : Ար-
կայի դուքսն և ուրիշ երեւելի Անգ-
լիացիներ մասնաւոր նամակներով
Հայոց համար իրենց համակրութիւ-
նը կարտայայտեն ։

Լոնտոնի և Մանչեսթրի Հայերն
այս գծուար պարագայներու մէջ
անտարբեր կեցած չեն : Նոքա՝ որ
Անգլիոյ պէս ազատ և քաղաքա-
կիրթ երկրի մէջ բնակելու բարեբաղ-
դութիւնն ունին , յիշելով Հայաս-
տանի տարաբաղդ Հայերը , կը նկըր-
տին այնպիսի միջոցներ ձեռք առ-
նուլ , որով առաջիկայ դեպքանաթո-
գովին մէջ Հայկական խնդիրն ևս
մեծ տէրութեանց առջեւ ներկայա-
նայ , և Հայաստանի համար արդա-
րեւ բարի կառավարութիւն մի ձեռք
բերուի : Բայց ոչ միայն Հայերն , այլ
և բարեհայր Անգլիացիք նոցա քա-
ղաքի և ջատագով կը կանգնին , և
'ի միասին կը դործեն ։

Մթն Պրայս Հայաստան Անգլիա-
ցին՝ որ Հայաստան երկար ճանբոր-
դութիւն ըրած , և մինչեւ իսկ Արա-
րատայ գագաթին երած է , մեծ հա-
մակրութիւն և սէր կարտայայտէ
Հայոց համար , և այժմեան Արեւել-
եան խնդրոյն առթիւ՝ նոցա օգտա-
կար լինելու նպատակաւ՝ տմոյս 19
ին իւր առուն հրաւիրեց մի թիւ իւր
Անգլիացի բարեկամներէն , ինչպէս
նաեւ Լոնտոն և Մանչեսթր բնակող
միւր համազգիներէն , Հայկական շա-
հերը պաշտպանելու հարկու որ ե-
ղած միջոցներուն վրայ խորհրդակ-
ցելու համար ։

Այս ժողովին ներկայ էին , ինչ-
պէս թուիմ և ուրիշ լրագրիւրներ հը-
րատարակեցին , Պաթիսի մարքիւր
Մթն Սէլի , Սըր Քէնէտէյ , Սըր
Հէնրի Վիլքինս , Սըր Քէնէտէյ ,

Մարտի 1-ին Երևանի քաղաքում և այլն, բնականորեն քաղաքի շրջանում, որոնցմէ շատերը Բաղրամյանի անդամ են, ինչպէս նաև ինն Հայագիւծի, որոնցմէ մին Գալիքեցի էր:

Առաջագրեալ խնդիրներն հետեւեալքն էին:

1. Թէ Հայաստանի արդի Հայ բնակչաց թիւն ո՞րչափ է բազմաթիւ թիւամբ Մարտի (իսկ) ժողովրդեան հետ:

2. Հայ ժողովրդեան դանդաղացումը և դժգոհութեանց ծրագիր մի ներկայացնել:

3. Թէ ինչ միջոցներ հարկաւոր են անոնց դարման տանելու համար:

4. Թէ ինքնօրինութիւն համար է Հայաստանի արդի դրութեան ներկայումս:

Անկախի մի վերայ Հայաստանի աշխարհագրական ընդարձակ տարածակ մի դրութեամբ էր, և ամեն ոք նորա դիրքը կը զննէր:

Մարտի Պրայն համառոտ ատենախօսութեամբ մի բացատրեց հանդիսականաց՝ ողն ժողովոյն նպատակն, որով կուզէր առիթ ընծայել հրաւիրեալ Հայոց՝ իրենց երկրին արդի վիճակին և նոր աշխարհի վերայ իրենց գաղափարներն յայտնելու: Անմիջապէս ետքը, մեր ազգակիցք իրենց պատրաստած դրութիւններն հանդիսականաց առջև ընթերցան:

Այս դրութեանց կարճառօտ բովանդակութիւնն հետեւեալն է:

Թէ Հայերն այսչափ դարերէ ի վեր Հայաստանի մէջ կը տառապին ոչ միայն բարբարոս ֆիւրտերու կողմանէ կրած զրկանքներով, հապառաւ տեղական կառավարութեան կողմանէ բաւական պաշտպանութիւն չը գտնելով: Թէ Հայերը բուն Հայաստանի մէջ խիստ թուաւոր են, սակայն եթէ նոցա թիւը վերջին ժամանակներս համեմատաբար նուազացած է, սորա պատճառն՝ իրենց շարունակ եղած զրկանաց չկրնալով տանիլ, հայրենի հողէն խուսափաւ տարագրելն է: Թէ ժամանակն հասեալ է, պէտք է իւրապա՝ մանաւանդ Անդրիա՝ նկատողութեան առնու Հայոց վիշտերը, որոնց յանցանքն՝ ըստ անանց՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ խաղաղասէր ինչին և Սուլթանին կառավարութեան դէմ՝ չապստամբիւն: Թէ Հայերն ինքնօրինութիւն կուզեն Հայաստանի համար, մանաւանդ որ Հայոց և թրքաց մէջ մասնաւոր դաւաճն տեսլութիւն մի չկայ, և թէ թուրքերն Հայոց պէս մի և նոյն ատենութեամբ կատեն զֆիւրտերն, և այլն և այլն:

Անդրիայի հանդիսականաց կողմանէ տաան և մէկ անձինք հետզհետէ խօսեցան: Սըր Վէրնէյ, Օնոնապլ, Ալլի, Պաթհի մարքիզն, և այլն, Հայոց համար իրենց ջերմ համակրութիւնն յայտնելով՝ ոմանք ինքնօրինութիւնը յարմար կը գտնէին. ուրիշներ բաւական զգուշութիւններ կը նշմարէին այսպիսի կառավարութեան համար Հայաստանի արդի դրութեան նկատմամբ. ոմանք ալ Լիբանանու կառավարութեան նըման կառավարութիւն մի աւելի յարմար կը գտնէին այժմ:

Այսպէս բաւական խօսելէ և գաղափարներ արտայայտելէ զինի, առաջարկուեցաւ մի մասնաժողով կազմել՝ բաղկացեալ բոլոր ներկայ դըստնող Անդրիայի և Հայագիւծի հանդիսականներէ, և որոշուեցաւ Լորտ Տէրպիլի պատգամաւորութիւն մի ուղղել, և յիշատակարան մի ներկայացնել, ինչդերով որ առաջիկայ դեպքանաժողովն մէջ Հայոց խնդիրն

իսկ նկատողութեան առնուի Մեծն Թրիտանիոյ պաշտպանութեան ներքեւ: Սըր Քէնուէյ մարդասիրաբար յանձն առաւ Լորտ Տէրպիլի դերը պատգամաւորութեան մասին, և Մթթըր Պրայն մասնաժողովի պատենադրելուն ընտրուեցաւ: Սըր Վէրնէյ իւր բոլոր համակրութիւնն յայտնելու համար՝ ինչդերք և առաջարկեց որ հետեւեալ ժողովը իւր տունը տեղի ունենայ:

Այսպէս վերջացաւ այս ժողովը՝ ի մեծ ուրախութիւն Հայ հանդիսականաց, որոնք բաւական բաւ չէին գտնել իրենց զգացած ուրախութիւններն և շնորհակալին յայտնելու այս աղիւս և վեհանձն ազգին զաւակներուն, որոնք Հայ անուան ցոյց տըւած կարեկցութեան և սիրոյն համար համայն Հայոց երախտագիտութեան արժանի են: * * *

Թ. Գ. Ինչպէս որ լինի իրական լրագրաց մէջ հրատարակուեցաւ արդէն, Լորտ Տէրպիլի հաւանեցաւ Հայ պատգամաւորութիւնն ընդունիլ սակայն որ մի չորսուեցաւ տակաւին, քանզի յայտնի իսկ չէ այժմ թէ դեպքանաժողովը տեղի պիտի ունենայ թէ ոչ:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Գ. ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ
2 մարտ 1878 Գահիրէ

... Խմբագրապետ:

Ներածական նամակիս ընդ փոյթ հըրատարակութեան քաջալերեալ՝ տարույս ճանապարհորդական Բ. շրջանիս օրագրութեանցս մէկ ծրագիրը—իբրև թղթակցութիւնը անընդհատ Զեղ պիտի յըղեմ ի պարտու պատշաճ տնօրէնութիւն:

Երբ—Եգիպտոս՝ ընդ երկար հին Աթէնքի նախանձը և Հոսփայ քաջապետը մը գրաւելին ետքը, այսօր ալ երկուսս արդ Եգիպտոս ընդհանուր ուղադրութիւնն հրաւիրած է իւր վրայ:

Զկայ աշխարհիս վրայ այնչափ բեղմնաւոր երկիր մը՝ որ հնախոյնն, իմաստաւորն, արհեստաւորն միահամուռ նկատումը անհուն առարկայ ընձեռէ:

Ի պատմութեան զիտեք թէ՛ ուր որ վաճառականութիւն կայ, երկրագործութիւն կայ, հովուական կեանք կայ, հոն քաղաքակրթութեան արահետը զիւրաւ ընդարձակ ապարելք գտած է:

Սոյն ընդհանուր նախադասութիւնէն ետքը, կուգամ քանի մը տեղադրական կարևոր գիտելիքներ ուրուագրել:

Եգիպտոսի զխաւոր բնակիչները հինգ ցեղի կը բաժնուին:

Առաջինը՝ խալիք, որ հին Եգիպտացոց մնացորդն են:

Գրիտոնէութիւնին Մարիոս Աւետարանչի առաքելութեամբ ընդունած Ղէմքերին բաց ծծմբագոյն, մթթերին կալուղ, կազմերին վտիտ, աչքերին մեծ մասամբ արատաւոր:

Թէ և հիմա երկրագործութեան տարածման շնորհիւ՝ տեղւոյն օղը բարեփոխեալ ըլլալով՝ արդի ժողովրդեան աչքերը օր ըստ օր բարելաւելու վրայ են:

Երկրորդը՝ Ֆէլլաք, որոնք սերունդը բուն Ղալիք ըլլալով՝ Մահմետական եղած են: Ասոնք Եգիպտոսի ժողովրդեան մեծ և տիրող մասը կը կազմեն:

Երրորդը՝ Աղէքսանդրիոյ և անոր շրջակայքը գտնուող Տաճկները, որոց հին անունը Յոյնք՝ Պարթև, Մաղդութ և Սիլիթ անունները կուտային:

Չորրորդը՝ Մէմֆիսներն են, որք Քեօէմէ ալ կըսուին, և որոց ծագումը Ասիայէն է:

Եգիպտոսի հին խալիքայններուն ժամանակը՝ հարձակաւորութեան պատճառաւ Ասիայէն գերի վտարած մաս մ'սպիտակ ժողովուրդ, Եգիպտոս բերած ըլլալով՝ անոնցմէ սերեալ են, որոց ձեռքն է եղեր ժամանակին երկրին կառավարութիւնը:

Մէհմետ-Ալին՝ Աղէքսանդրիա իւր իշխանութեան ներքեւ գրաւելին առաջ, անոնց մեծ ջորք մը տուել է Տաճկներու:

Իւր լայնածաւալ դաշտին մէջ՝ ստակալի պատերազմէ մ'ետեւ:

Նոյնպէս արևմուտս պատերազմով վտարել է նաև Գահիրէի բերդէն Նոյն Մէմֆիսները, որոնք տիրել էին շատ ժամանակէ ի վեր տեղական վարչութիւնն ստանձնած:

Հինգերորդը՝ Պէրպէսիները, որոնք այլ և այլ ցեղեր են Ասոնք առանձին սահմանն ինքնօրին կառավարութիւն ունին:

Գծագրութիւնին՝ ընդհանրապէս թէ մարմնով վտիտ, բայց բարձրահասակ և ջղային կազմուածք ունին:

Այս ժողովուրդը աչքի տեսութեան նկատմամբ՝ Եգիպտոսցոց հակառակ, ողջ և սրտեւ են:

Բնաւորութեամբ հաւատարիմ ճանչցուած ըլլալով՝ սեղանաւորաց և վաճառականաց կրպակներու և պաշտօնատեղիներու հսկողութեան պահպանութիւնը կընեն:

Պէրպէսիստանի սահմանէն վեր ժողովուրդ մ'ալ կայ, Նեֆէ կոչուած, որոնք ընդհանրապէս եթէ մարդիկ և եթէ կանայք՝ մասնաւոր և տեղի երկայն պոչ ունենան:

Ասոնք՝ գաղանական ընդթ ունին:

Իրենց մէջ ամուսնութիւնը ճանչցուած չէ: Գիշտիչ բնաւորութեամբ կախորժին մարդու մարմին ուտել, և մասնաւորապէս սպիտակագոյն մարդկանց, որոնց համար մասնաւոր որսորդութեան արհեստ ունենալով՝ կը ջանան զիւրաւոր մարդս իր առականաց կողմանէ:

Այս պատճառաւ՝ Եգիպտոսի իշխանութեան մէջ երբոր դերեվաճառութեան թոյտութիւն կար, միշտ ի նկատի կ'առնուէր որ շուրջ թէ Նեֆէ ցեղէն ըլլայ: Որովհետև ասոնց՝ արանց և կանանց՝ չէր կրնար երախտային յանձնուիլ: Առթիւ մը՝ առանձին գտնուած ժամանակին, կը զիջատէին և կուտէին խեղճ տղեկները, ինչպէս որ երբեմն ալ պատահած է:

Ասոր համար է որ զնած ատենին կը նային որ՝ պոչ ունին թէ ոչ:

Նաև Եգիպտոսի ժողովուրդը բաղկացեալ է այլ և այլ օտար ազգերէ, ինչպէս Հայոց, Յունաց և Եւրոպացոցմէ, որոնք գաղթականութեամբ տեղի կը գտնուին, և շատ աւելի բազմութեամբ Եւրոպացիք, որոնք Եգիպտոսի վաճառականութիւնը գրաւած են:

Բնակչաց մասին այսչափ: Դառնալով ուրիշ կէտերու:

Եգիպտոսի կլիման բարեխառն է թէև, սակայն առաւօտեան ցուրտ ցօղիկը, և երեկոյեան պաղ շամանդաղը մարդուս քնասակար ներգործութիւն կընեն:

Պօրոյ տաքէն զգուշանալու է, Եգիպտոսի ցուրտէն, կըսեն, Հոս արեւադարի չկայ:

Պօրոյ մէջ՝ ամեն մարդ զլուսը բաց, ոտքերը տաք պահել կուզէ. հոս ընդհակառակն՝ զլուսը տաք, ոտքերը բացիլ:

Արդէն երկրին երկու տեսակ հով կը չնչն ընդհանրապէս: Մէկն հիւսիսային, միւսն հարաւային:

Առաջինը՝ առողջարար է, երկրորդը՝ կաղըրորիչ:

Զմեռը շատ քիչ անգամ արեւմտեան հով կը փչէ, ինչպէս ամառը արեւելեան հով: Արեւելեան հովը՝ եթէ շատ տեւելու ըլլայ, ինչպէս և հոսմոյն հիւսիսային յառաջ կը բերէ:

Մի և նոյն օրուան մէջ Ցէն մինչև 12 աստիճան կը տարբերի ջերմաստիճանը:

Եգիպտոս իւր բազմամարդութեամբն ու պտղաբերութեամբը նշանաւոր է:

Ա. պատճառ. այս երկրին համար բնաւ գաղթականութիւն լուած չէ:

Բ. պատճառ. կանայք արդիւնաւոր են, ինչպէս նաև կենդանիք շատ բեղմնաւոր:

Խիստ շատ անգամ կը լուսին երկրորդականերու ծնունդներ և ուրիշներուն բազմանութիւնը:

Լաթիքը՝ շատ բանեւոր համար հոս ի գործ կ'ածեն:

Բուսոց կեանքն ու տնկոց տնտեսն ալ ոչ նուազ հետաքրքրական: Մի և նոյն ժամանակ թէ կը ցանեն և թէ կը հոծեն:

Վաղընչուց ժամանակներէ ի վեր հաստատուած է թէ Եգիպտոս Հոմերոսի եօթնաբերան կոչած Նեղոսի ջրովը կ'առագոյր:

Ձեռք՝ Նեղոսը, և ահա ջնջած կըլլայ Եգիպտոս:

Եգիպտոս Եգիպտոս ընող և աշխարհի առջև չքնադակիրտ վայր մը հանդիսացը. նոյն, Նեֆէ—Մեղաքէն եղած է, որուն համար Հերոդոտոս իրաւամբ Գեոքեթա իշխան կ'անուանէ:

Յաւէտ բարեկամը
Ա. Բ. Ա. Գ. Դ. Ե.

Բուժելի երկաթուղեաց ԿԳ ընդ վիճակահանութիւնը ապրիլ 1ին (ըստ Ն. Տ.) կատարուելով՝ հետեւեալ թիւերը պարգև շահեցան:

Պարգև շահող թիւք.			
Թիւ	Ձեռք	Թիւ	Ձեռք
829829	600000	395161	1000
270844	60000	553496	»
933497	20000	603723	»
1769297	»	603724	»
182402	6000	638587	»
638589	»	664705	»
748492	»	667294	»
1488196	»	675143	»
1735703	»	675445	»
1918044	»	975357	»
126436	3000	1106493	»
226971	»	1151822	»
464303	»	1218113	»
667294	»	1226086	»
985715	»	1226088	»
992376	»	1226089	»
1159490	»	1429246	»
1375434	»	1676712	»
1711486	»	1755705	»
1752697	»	1768312	»
1769300	»	1769298	»
1906227	»	1849063	»
273804	1000	1906228	»
289228	»	1918044	»
377558	»	1947367	»

Ի Լ Ա Ն

Խոսք խոսանելիքստէն մաստա, խոսք իննամ ինչիւն մըդ տարի քեաֆի դ. օյուն էթի պուլմագ մուհալ հիւքմինէ կիրմիլ օլմաւընտան տօլայը, իշպու տօգսան տէօրթ սէնէյի բուլմիլէսի մարմը իշուն, խոսք խոսանելիքստէն դայրէյէ վէրիլմէք իշուն, զարուրի օլըր էթի գօնթրաթօսա բապթ օլուն մըլ, վէ պուլուն պէհէր գըլէսի իշուն օն պիր դուրուլ պէտէյ իլմասը զարարաշարըրմը օլըրըլմտան, էս հապը թայիլմթըն իսթիհաղ լէրինի սըղըր էթի օլարագ մահալլէրինտէն այլէն, վէ եալստ իսթէրլէր իտէ, պէհէր գըլէսի դայիլմէ երեղ զուրուլ հիսապի իլէ օն պիր դուրուլ օլարագ իշպմիլէ խաղիլմէստէն պէտէլէն ալմալէրի լաղըմ կէլէճէյի մալիլմէլէրի օլմագ իւղըր իլան օլունուր:

14 Մարտ 1878

Պապը Սէրասքէրէ

Ի Լ Ա Ն

Էմանէթ վարկաւորընտան օլըրագ պէհէր սէնէ պիլ միւղայիտէ զուհուր իտէն թալիպլէրինէ մագթիլմէն իհալէ օլունմաքտա օլան տէրտատէթ վէ պիլատը սալիլմէն մէվագթի միւթ թէ ատտէն մալի մէսիտէ վագը պիլ ճիւլմէ միւղալ մարուքէն լէղիլէր ըուստ մըլըն իշպու տօգսան տէօրթ սէնէյի մարթ իսթիլտատընտան իլթիպարէն պիր սէնէլիլիլ թօլտտան իհալէ քըլընմաղըր մահալտտէմ իլան քըլընմըլ իտի, պուլ քէրէ իսթէնիլտիլի հալտէ բարչա բարչա օլարագ զուհուր իտէճէք թալիպլէրինէ շէրայիլթը մալստու սէսիլ իլէ իհալէ վէ իլղալմէ մաքտարէր պուլմիլմաղ օլմաղլէրու սուլմէ մէղլիլէրին օլլէճէ իլէ տէրիւհտէ վէ իլթիլմալմէն թալիպ օլարալարըն շէհրի հալը մարթըն իհալէ իտէն քուտար լաճըլ իլմիլէ զայիտէ միլ թէհալի տէրիլ իլէ պէրապէր էմանէթ մէճիլմիլէ միւրաճաւթ իլլէ մէլէրի իլան օլունուր:

94 մարտ 23

* Իւր տիրոջն է:

Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԳՐԱՏ
ՇԱԼԱԹԱՆ ԳՕԲՈ ԻՄՆ